ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-18/17

ք. Երևան «26» հուլիսի 2018թ.

«ՀՀ Հատուկ քննչական ծառայության աշխատակազմ» ՊԿՀ-ը ի դեմս գլխավոր քարտուղար Դ.Սուքիասյանի, որը գործում է «ՀՀ Հատուկ քննչական ծառայության աշխատակազմ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էլաամոդա» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Է. Հովսեփյանի, որը գործում է «Էլաամոդա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **5350404 (հինգ միլիոն երեք հարյուր հիսուն հազար չորս հարյուր չորս)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Հատուկ քննչական ծառայության	«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
աշխատակազմ ՊԿՀ	ք. Երևան, Դրոյի փ. 8շ. 4 բն.
ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա	«Յունիբանկ» ԲԲԸ
Ֆին.նախ.գործառնական վարչություն	Մալաթիա մասնաճյուղ
Հ/Հ900011474286	Հ/Հ 24105020675400
ՀՎՀՀ 02589128	ՀՎՀՀ 00889965
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Դ. Սուքիասյան	Է. Հովսեփյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 1
«26» հուլիսի 2018թ. կնքված
ՀԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/17 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/<< դրամ	ընդհանուր գինը/<< դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	18221100/1	անջրանցիկ հագուստ	Հայաստանի Հանրապետություն	անձրևանոց՝ Կտորը՝ անձրևանոց՝ մուգ մանուշակագույն անջրաթափանց կտորից, միակոճկուն, ուղիղ ուրվագծով օձիքը՝ ծալովի, մեջքամասը և կրծքամասը՝ դեպի դուրս բացվող վերին կարով, փեշը՝ գետնից բարձր 60 սմ, ունի նույն կտորից ալաստմասսայե ճարմանդով գոտի (ձև N 5, նկար 1 և 2). Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:	հատ	36000	1476000	41	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա	41	10.12.18թ
2	18221600/1	կոստյումներ	Հայաստանի Հանրապետություն	կիտել՝ Կտորը՝ մուգ մանուշակագույն կիսաբրդյա կտորից (կտորի բաղադրությունը 67% բուրդ և 33% պոլիէսթեր քաշը 1մ2 մակերեսի վրա՝ 317գ), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, ձախ կողմում ունի ծոցագրպան: 3-րդ դասի խորհրդականից մինչև արդարադատության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ծառայողների համար միակոճկուն՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով միաշարք երեք արծաթագույն կոճակներով, կարանովի թիկնամասով և փողքերի կտրվածքով (ձև N 2, նկար 2 և 3): Բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների համար երկկոճկուն (երկփեղկ)՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով 6	հատ	48000	1968000	41	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա	21	3-րդ եռ.18թ
										20	25.11.18թ

				արծաթագույն կոճակներով՝ տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի (ձև N 2, նկար 1). տաբատ՝ **նույն կտորից**, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, 2,5 մմ լայնությամբ մուգ մորեգույն եզրակարով, գոտին գոտեմակողերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են, հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան (ձև N 2, նկար 2 և 3), բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների համար՝ եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է մուգ մորեգույն վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով (ձև N 2, նկար 1). Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:							
3	18231400/1	1.տաբատներ	Հայաստանի Հանրապետություն	տաբատ՝ Կտորը՝ մուգ մանուշակագույն կիսաբրդյա կտորից (կտորի բաղադրությունը 67% բուրդ և 33% պոլիէսթեր քաշը 1մ2 մակերեսի վրա՝ 317գ), ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, 2,5 մմ լայնությամբ մուգ մորեգույն եզրակարով, գոտին գոտեմակողերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են, հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան (ձև N 2, նկար 2 և 3), բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների համար՝ եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է մուգ մորեգույն վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով (ձև N 2, նկար 1). Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:	հատ	15996	31992	2	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա	2	3-րդ եռ.18թ.
4	18231400/2	2.տաբատներ	Հայաստանի Հանրապետություն	տաբատ՝ Կտորը՝ մուգ մանուշակագույն կիսաբրդյա կտորից (կտորի բաղադրությունը 67% բուրդ և 33% պոլիէսթեր քաշը 1մ2 մակերեսի վրա՝ 317գ), ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, 2,5 մմ լայնությամբ մուգ մորեգույն եզրակարով, գոտին գոտեմակողերով, կոճկվում է երկու կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են, հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան (ձև N 2, նկար 2 և 3). Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:	հատ	13992	545688	39	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա	19 20	3-րդ եռ.18թ. 25.11.18թ

5	18331200/1	1.վերնաշապիկներ	Հայաստանի Հանրապետություն	վերնաշապիկ՝ երկարաթև՝ սպիտակ կտորից, ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ երկար, կոճակով կոճկվող թեզանիքներով : 3-րդ դասի խորհրդականից մինչև արդարադատության 1-ին դասի խորհրդականի համար վերնաշապիկի ձախ գրպանի վերնամասում կարվում է արծաթագույն զարդանշանը, իսկ բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների համար, կարվում է զարդանշանը: Զարդանշանի վերևում դրվում են դասային աստիճանները ցույց տվող աստղանշանները. Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Չափերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:	հատ	9000	369000	41	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա	41	25.11.18թ
6	18331200/2	2.վերնաշապիկներ	Հայաստանի Հանրապետություն	վերնաշապիկ՝ կարճաթև՝ սպիտակ կտորից է, ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող ձևավոր կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ կարճ, ուղիղ թևքածալերով: 3-րդ դասի խորհրդականից մինչև արդարադատության 1-ին դասի խորհրդականի համար վերնաշապիկի ձախ գրպանի վերնամասում կարվում է արծաթագույն զարդանշանը, իսկ բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների համար կարվում է զարդանշանը: Զարդանշանի վերևում դրվում են դասային աստիճաններ ցույց տվող աստղանշանները. Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Չափերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:	հատ	8400	344400	41	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա	41	3-րդ եռ.18թ.
7	18421120/1	փողկապներ	Հայաստանի Հանրապետություն	փողկապ՝ սև, ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Օձիքի տակ ամրանում է էլաստիկ ժապավենով և ամրակով: Փողկապի վրա ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշանը (ձև N 3, նկար 1 և 2).	հատ	2796	114636	41	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա	20	3-րդ եռ.18թ.
										21	25.11.18թ

8	18441100/1	1.գլխարկներ	Հայաստանի Հանրապետություն	գլխարկ հովարով՝ Կտորը՝ մուգ մանուշակագույն կիսաբրդյա կտորից (կտորի բաղադրությունը 67% բուրդ և 33% պոլիէսթեր քաշը 1մ2 մակերեսի վրա՝ 317գ). . սև թավշյա գլխարկաբոլորքով, մուգ մորեգույն եզրաշերտով, գլխարկագագաթի և գլխարկաբոլորքի վրա՝ մուգ մորեգույն եզրաշերտ: Երկու կոճակներով ամրացվում է երկշերտ հյուսված կապը (քուղը)՝ գլխարկաբոլորքի վրա ցանցահյուսազարդով: Գլխարկաբոլորքի վրա՝ առջևի կենտրոնական մասում ամրացվում է արծաթագույն գլխարկանշան (ձև N 1, նկար 11), որի կենտրոնական մասում զետեղված է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության խորհրդանիշը: Գլխարկահովարը սև է, լաքապատ (ձև N 1, նկար 4): Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:	հատ	10992	428688	39	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13[սս]	19	3-րդ եռ.18թ.
										20	25.11.18թ
9	18441100/2	2.գլխարկներ	Հայաստանի Հանրապետություն	Բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների գլխարկ հովարով՝ Կտորը՝ մուգ մանուշակագույն կիսաբրդյա կտորից (կտորի բաղադրությունը 67% բուրդ և 33% պոլիէսթեր քաշը 1մ2 մակերեսի վրա՝ 317գ). , սև թավշյա գլխարկաբոլորքով, մուգ մորեգույն եզրաշերտով, գլխարկագագաթի և գլխարկաբոլորքի վրա՝ մուգ մորեգույն եզրաշերտ: Երկու կոճակներով ամրացվում է երկշերտ հյուսված կապը (քուղը)՝ գլխարկաբոլորքի վրա ցանցահյուսազարդով: Բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների գլխարկահովարից վերև՝ գլխարկաբոլորքի վրա, բացի արծաթագույն լարահյուսից, ամրացվում է կաղնու ճյուղերի տեսքով 2 համաչափ արծաթեկար զարդ՝ 5-տոկոսանոց արծաթե թելերով, որի կենտրոնական մասում զետեղված է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության խորհրդանիշը (ձև N 1, նկար 6), իսկ գլխարկագագաթի վրա՝ առջևի կենտրոնական մասում, Հայաստանի Հանրապետության արծաթագույն զինանշանը (ձև N 1, նկար 3, 7). Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:	հատ	42000	42000	1	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13[սս]	1	3-րդ եռ.18թ.
10	18441100/3	3.գլխարկներ	Հայաստանի Հանրապետություն	Բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների գլխարկ հովարով՝ Կտորը՝ մուգ մանուշակագույն կիսաբրդյա կտորից (կտորի բաղադրությունը 67% բուրդ և 33% պոլիէսթեր քաշը	հատ	30000	30000	1	ք. Երևան, Վ.Վաղարշյան 13[սս]	1	3-րդ եռ.18թ.

				1մ2 մակերեսի վրա՝ 317գ), , սև թավշյա գլխարկաբոլորքով, մուգ մորեգույն եզրաշերտով, գլխարկագագաթի և գլխարկաբոլորքի վրա՝ մուգ մորեգույն եզրաշերտ: Երկու կոճակներով ամրացվում է երկշերտ հյուսված կապը (քուղը)՝ գլխարկաբոլորքի վրա ցանցահյուսազարդով: Բարձրագույն դասային աստիճան ունեցող ծառայողների գլխարկահովարից վերև՝ գլխարկաբոլորքի վրա, բացի արծաթագույն լարահյուսից, ամրացվում է կաղնու ճյուղերի տեսքով 2 համաչափ արծաթեկար զարդ՝ 5-տոկոսանոց արծաթե թելերով, որի կենտրոնական մասում զետեղված է Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության խորհրդանիշը (ձև N 1, նկար 6), իսկ գլխարկագագաթի վրա՝ առջևի կենտրոնական մասում, Հայաստանի Հանրապետության արծաթագույն զինանշանը (ձև N 1, նկար 3). Չափսերի քանակները տրամադրվում են պատվիրատուի կողմից, մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ:							

ԳՆՈՐԴ

ՀՀ Հատուկ քննչական ծառայության
աշխատակազմ ՊԿՀ
ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա
Ֆին.նախ.գործառնական վարչություն
Հ/Հ900011474286
ՀՎՀՀ 02589128
Գլխավոր քարտուղար՝
Դ. Սուքրանյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
ք. Երևան, Դրոյի փ. 8շ. 4 բն.
«Յունիբանկ» ԲԲԸ
Մալաթիա մասնաճյուղ
Հ/Հ 24105020675400
ՀՎՀՀ 00889965
Տնօրեն՝
Է. Հովսեփյան

/ստորագրություն/

Հավելված N 2
«26» հուլիսի 2018թ. կնքված
ՀՔԾ-ԳՀԱՊՁԲ-18/17 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18221100/1	անջրանցիկ հագուստ	0	0	0	0	0	0	0	0	0	1476000	1476000	1476000	1476000
2	18221600/1	կոստյումներ	0	0	0	0	0	0	0	0	0	1968000	1968000	1968000	1968000
3	18231400/1	1.տաբատներ	0	0	0	0	0	0	0	0	0	31992	31992	31992	31992
4	18231400/2	2.տաբատներ	0	0	0	0	0	0	0	0	0	545688	545688	545688	545688
5	18331200/1	1.վերնաշապիկներ	0	0	0	0	0	0	0	0	0	369000	369000	369000	369000
6	18331200/2	2.վերնաշապիկներ	0	0	0	0	0	0	0	344400	344400	344400	344400	344400	344400
7	18421120/1	փողկապներ	0	0	0	0	0	0	0	0	0	114636	114636	114636	114636
8	18441100/1	1.գլխարկներ	0	0	0	0	0	0	0	0	0	428688	428688	428688	428688
9	18441100/2	2.գլխարկներ	0	0	0	0	0	0	0	0	0	42000	42000	42000	42000
10	18441100/3	3.գլխարկներ	0	0	0	0	0	0	0	0	0	30000	30000	30000	30000
Ընդամենը			0	0	0	0	0	0	0	344400	344400	5350404	5350404	5350404	5350404

ԳՆՈՐԴ
ՀՀ Հատուկ քննչական ծառայության
աշխատակազմ ՊԿՀ
ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա
Ֆին.նախ.գործառնական վարչություն
Հ/Հ900011474286
ՀՎՀՀ 02589128
Գլխավոր գարտուղար՝
Դ. Մուքիասյան

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ
«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ
ք. Երևան, Դրոյի փ. 8շ. 4 բն.
«Յունիբանկ» ԲԲԸ
Մալաթիա մասնաճյուղ
Հ/Հ 24105020675400
ՀՎՀՀ 00889965
Տնօրեն՝
Է. Հրչյանյան

/ստորագրություն/

Հավելված N 3
«26» հուլիսի 2018թ. կնքված
ՀԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/17
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«26» հուլիսի 2018թ. կնքված
ՀԲԾ-ԳՀԱՊՁԲ-18/17
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն